ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

փոխակերպող քննադատական հետազոտության մոտեցում

URBAN IMAGINATION
Sociological Research Laboratory

WOMEN'S FUND ARMENIA

Հետազոտության հեղինակ՝

Շուշանիկ Հարությունյան

Համահետազոտող կանայք Կապան քաղաքից՝

Անի Սարգսյան

Արշալույս Հակոբյան

Մերի Ներսիսյան

Սոնա Սարգսյան

Սվետլանա Գրիգորյան

Ծրագիրն իրականացվել է Հայաստանում կանանց հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Սույն զեկույցում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակին և կարող են չհամընկնել Հայաստանում կանանց հիմնադրամի տեսակետների հետ:

URBAN IMAGINATION
Sociological Research Laboratory

WOMEN'S FUND ARMENIA

Բովանդակություն

Հետազոտության ամփոփագիր....4

Ներածություն....5

Մեթոդաբանություն....7

Հետազոտության արդյունքներ....10

Գլուխ 1. Կանայք հանքարդյունահանող քաղաքում.տնտեսական, առողջական, բնապահպանական, քաղաքական և սոցիալ-մշակութային ազդեցություններ

1. Հանքարդյունաբերության տնտեսական ազդեցությունը....10
2. Հանքարդյունաբերության ազդեցությունը առողջության և շրջակա միջավայրի վրա....14
3. Քաղաքական մասնակցություն և որոշումների կայացում....17
4. Գենդերային հարաբերություններ և սոցիալ-մշակութային միջավայր....20

Գլուխ 2. Սոցիալական տարբեր խմբերի կանանց անձնական փորձառությունները հանքարդյունաբերական քաղաքում

1. Հանքարդյունաբերության ոլորտում աշխատող կանայք....22
2. Հանքարդյունահանող կազմակերպությունում աշխատողների ընտանիքի կին անդամներ....25
3. Կին առաջնորդներ՝ ՏԻՄ-երում աշխատող կանայք կամ ակտիվիստներ....27
4. Կանայք, ովքեր չունեն աշխատանք հանքարդյունահանող քաղաքում....29
5. Հանքարդյունաբերության հետևանքով առողջական խնդիրներ ունեցող կանայք....31

Եզրակացություն....33

Առաջարկներ....36

1. Առաջարկներ կանանց հզորացման համար հանքարդյունահանող քաղաքներում....36
2. Առաջարկներ հանքարդյունահանման շուրջ ձևավորված քաղաքների համար....38

Օգտագործված աղբյուրներ....40

Հետազոտության ամփոփագիր

Հանքարդյունահանման շուրջ ձևավորված քաղաքները համարվում են տնտեսապես ավելի զարգացած: Սակայն քիչ ուսումնասիրություններ կարելի է գտնել հայաստանյան իրականության վերաբերյալ, թե ինչպես է այն ազդում սոցիալական տարբեր խմբերի կյանքի վրա: Այս զեկույցը Կապան քաղաքի օրինակով անդրադառնում է հանքարդյունահանման շուրջ ձևավորված քաղաքում կանանց անձնական փորձառություններին: Հետազոտության շրջանակներում կիրառվել է փոխակերպող քննադատական գործողությունների տեսությունը: Իրականացվել են որակական խորին հարցազրույցներ հանքարդյունաբերական քաղաքում ապրող կանանց հետ: Կապան քաղաքում կազմվել է հանքարդյունաբերության ազդեցությունը կրող կանանցից խումբ, ովքեր հանդես են եկել որպես համայնքային համահետազոտողներ: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ տնտեսական զարգացումը միշտ չէ, որ նպաստում է համայնքների հզորացմանը: Հանքարդյունահանման տրամաբանության շուրջ ձևավորված քաղաքում, տնտեսական այլընտրանքների սակավության պայմաններում, մեծանում են գենդերային անհավասարության ռիսկերը՝ դառնալով քաղաքի զարգացման ոչ կայուն լուծում: Զեկույցը նախատեսված է կայուն քաղաքային զարգացմամբ հետաքրքրվող մասնագետների, գենդերային խնդիրներով զբաղվողների, որոշում կայացնողների և համայնքային քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար:

Ներածություն

Հանքարդյունաբերության վերաբերյալ հետազոտությունները Հայաստանում մեծապես բնագիտական են[1], և քիչ ուսումնասիրություններ կարելի է գտնել, թե ինչպես է այն ազդում սոցիալական միջավայրի վրա հանքարդյունահանող համայքներում: Հայաստանի Սյունիքի մարզի քաղաքների տնտեսությունը մեծապես կախված է հանքարդյունաբերությունից: Չնայած հանքարդյունահանող քաղաքները տնտեսապես ավելի զարգացած են [2], հետաքրքրական է, որ հանքարդյունաբերությունը համարվում է «տղամարդկանց» ոլորտ: Ուստի, կարևոր է խնդիրը տնտեսական հաշվարկներից բացի ուսումնասիրել նաև գենդերային արդարության դիրքից:

Կապան քաղաքի տնտեսությունը նույնպես հիմնված է հանքարդյունահանման վրա: Բացի հանքարդյունաբերական քաղաք լինելը, Կապանը նաև սահմանամերձ բնակավայր է: Ադրբեջանի հետ 2020 թվականի պատերազմից հետո քաղաքը մշտական ռազմական սպառնալիքի տակ է հայտնվել: Ուստի, տնտեսական, սոցիալական, քաղաքական անկայունության, և աշխատատեղերի այլընտրանքների բացակայության

[1] Pipoyan, D., Stepanyan, S., Beglaryan, M., Stepanyan, S., Mendelsohn, R., & Deziel, N. C. (2023). *Health risks of heavy metals in food and their economic burden in Armenia*. Environment international, 172, 107794. https://doi.org/10.1016/j.envint.2023.107794.;Grigoryan, R., Petrosyan, V., Melkomyan, D., & Khachadourian, V. (2023). *Assessment of ecological and toxicological state of soils and waters in the neighborhood of mining industry enterprises in the Armenian Highlands*. Environmental Science and Pollution Research, 30(1), 1234–1245.DOI:10.3390/life13020394.

[2] Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն. (2023). *Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023թ. հունվար-հոկտեմբեր (Հաշվետվություն No. 142, էջ 97-98)*. Արմստատ. https://armstat.am/file/article/sv_10_23a_142.pdf.

պայմաններում, հանքարդյունաբերությունը կայունության և ապահովության զգացում է ստեղծում, և շատ դեպքերում հանքարդյունաբերության ոլորտում աշխատելը հեղինակավոր է համարվում:

Այս հետազոտության նպատակն է Սյունիքի մարզի Կապան քաղաքի օրինակով հասկանալ, թե ինչպես է հանքարդյունաբերությունը ազդում կանանց կյանքի վրա տնտեսական, առողջապահական, քաղաքական և սոցիալական տեսանկյուններից: Զեկույցը կազմված է երկու գլխից: Առաջին գլուխը վերաբերվում է կանանց կյանքի վրա հանքարդյունաբերության տնտեսական, առողջական, բնապահպանական, քաղաքական և սոցիալ-մշակութային ազդեցություններին: Երկրորդ գլուխը անդրադառնում է սոցիալական տարբեր խմբերի կանանց անձնական փորձառություններին հանքարդյունաբերական քաղաքում:

Մեթոդաբանություն

Փոխակերպող քննադատական գործողությունների հետազոտությունը միավորում է քննադատական տեսությունը [3], մասնակցային հետազոտությունը [4] և փոխակերպող սոցիալական հետազոտությունը [5]: Այս մեթոդաբանության ենթադրում է միաժամանակ գիտելիքի արտադրություն և համայնքի հզորացում [6]: Փոխակերպող քննադատական գործողությունների հետազոտության նպատակն է ոչ միայն ուսումնասիրել իրականությունը, այլև հարցադրել տարբեր պատկերացումները, որոնք ստեղծում են այդ իրականությունը [7]: Ուստի, ուսումնասիրությունը միավորում է հետազոտությունը, կրթությունը և ջատագովությունը8:

Այս տեսության շրջանակներում կարևորվում է ոչ միայն գիտելիքի արտադրությունը, այլ նաև դրա սոցիալական ազդեցությունը: Հետևաբար, հետազոտության սոցիալական ազդեցությունը մեծացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի հետազոտողը հետազոտվողին դիտարկի ոչ թե որպես «խոցելի խմբի», այլ ճանաչի ու գնահատի նրանց

[3] Browne, C. (2017). *Critical social theory*. SAGE Publications Ltd, https://doi.org/10.4135/9781473911819.

[4] Reid, C. (2004). *Advancing women's social justice agendas: A feminist action research framework*. International Journal of Qualitative Methods, 3(3), 1–15. https://doi.org/10.1177/160940690400300301.

[5] Mertens, D. M. (2021). *Transformative research methods to increase social impact for vulnerable groups and cultural minorities. Social Sciences,* 10(8), 287. https://doi.org/10.3390/socsci10080287.

[6] Hall, B. (1992). *From margins to center? The development and purpose of participatory research*. The American Sociologist, 23(4), 15–28. https://doi.org/10.1007/BF02691928.

[7] Mertens, D. M. (2021). *Transformative research methods to increase social impact for vulnerable groups and cultural minorities*. Social Sciences, 10(8), 287. https://doi.org/10.3390/socsci10080287.

[8] Ibid, 2-3.

փոխակերպող ուժը [9] : Ուստի, հետազոտության շրջանակներում կարևոր է կանանց մասնակցությունը, գործողությունը, հետազոտության որակական բնույթը, որը լսելի կդարձնի կանանց ձայները, անձնական և սոցիալական տրանսֆորմացիան[10]:

Այսպիսով, այս ուսումնասիրության ընթացքում կանայք դիտվել են ոչ թե որպես թույլ և անհավասար սոցիալական խումբ, այլ փոփոխության նախաձեռնողներ: Կապան քաղաքում կազմվել է թիրախ խմբի ներկայացուցիչներից խումբ, և կանայք հանդես են եկել որպես համահետազոտողներ: Նրանք ընտրվել են այնպես, որ նույն կենսափորձը ունենան, ինչ հետազոտության ընթացքում հարցված մյուս կանայք, քանի որ իրենց կյանքի փորձը ավելի մոտ է հետազոտման օբյեկտին: Այսինքն, օրինակ, եթե կինը ընդգրկված է բնապահպանական ակտիվիզմում, ապա հարցազրույցներ է իրականացրել այլ ակտիվիստ կանանց հետ: Սա մեծացնում է հետազոտության արդյունքների վավերականությունը և հուսալիությունը [11] : Ուսումնասիրության բոլոր փուլերում մասնակից կանայք ներգրավվել են հետազոտման գործընթացում՝ սկսած հետազոտության խնդիրների սահմանումից մինչև մեթոդների ընտրություն և դաշտային աշխատանքներ: Հետազոտության արդյունքները ևս քննարկվել և համաձայնեցվել են մասնակից կանանց հետ: Ընտրվել են կանանց հինգ հիմնական խմբեր՝

[9] Reason, P., & Torbert, W. R. (2001). *The action turn: Toward a transformational social science*. Concepts and Transformation, 6(1), 1–37. https://doi.org/10.1075/cat.6.1.02rea

[10] Maguire, P. (1987). *Doing participatory research: A feminist approach*. Amherst, MA: Center for International Education, University of Massachusetts.

[11] Greenwood, D. J., & Levin, M. (1998). *Introduction to action research: Social research for social change*. Thousand Oaks, CA: Sage Publications.

Ընտրանք	
Կանայք, ովքեր աշխատում են հանքարդյունաբերության ոլորտում:	*2*
Հանքարդյունահանող կազմակերպությունում աշխատողների ընտանիքի կին անդամներ:	*2*
Կին առաջնորդներ՝ ՏԻՄ-երում աշխատող կանայք կամ ակտիվիստներ:	*2*
Կանայք, ովքեր չունեն աշխատանք հանքարդյունահանող քաղաքում:	*2*
Կանայք, ովքեր ունեն առողջական խնդիրներ հանքարդյունաբերության հետևանքով:	*2*
Ընդհանուր՝ 10 հարցազրույց	

Իրականացվել է որակական հետազոտություն, ինչը թույլ է տալիս վեր հանել հանքարդյունաբերության ազդեցությունը կանանց կյանքի վրա: Կիրառվել է խորին հարցազրույցների մեթոդը: Յուրաքանչյուր թիրախ խմբի ներկայացուցչի հետ իրականացվել է երկու հարցազրույց: Ընդհանուր առմամբ իրականացվել է տասը հարցազրույց Կապան քաղաքում, որոնք ենթարկվել են թեմատիկ վերլուծության [12] : Հետազոտության դաշտային աշխատանքները տեղի են ունեցել 2024 թվականի դեկտեմբեր-2025 թվականի հունվար ամիսներին: Հարցազրույցներն իրականացվել են անանուն, պահպանվել են հարցվողների անձնական տվյալների գաղտնիությունը, ինչպես նաև հետազոտության այլ էթիկական կանոնները[13]:

[12] Braun, V., & Clarke, V. (2006). *Using thematic analysis in psychology*. Qualitative Research in Psychology, 3(2), 77–101. https://doi.org/10.1191/1478088706qp063oa.

[13] Fozdar, F., & Israel, M. (2020). *Sociological research ethics: Contributions and controversies*. In A. S. Iltis & D. MacKay (Eds.), The Oxford handbook of research ethics (pp. 525–541). Oxford University Press.

Հետազոտության արդյունքներ

Գլուխ 1. Կանայք հանքարդյունահանող քաղաքում.տնտեսական, առողջական, բնապահպանական, քաղաքական և սոցիալ-մշակութային ազդեցություններ

Հանքարդյունաբերության տնտեսական ազդեցությունը

Տնտեսական այլընտրանքների սակավության պայմաններում հանքարդյունաբերությունը Կապան քաղաքում համարվում է գերակա ոլորտ: Ուստի, բնակչության մեծ մասը, այդ թվում նաև կանայք, կախված են այս ոլորտից: Որոշ դեպքերում հանքարդյունաբերությունը կանանց համար ստեղծում է տնտեսական ներառման, աշխատանքում առաջխաղացման նոր հնարավորություններ: Կանանց մի մասը նաև ներգրավված է կանանց համար ոչ ավանդական, ֆիզիկական ծանր աշխատանք պահանջող աշխատանքներում, ինչը որոշ չափով նպաստում է մշակութային փոփոխությանը, գենդերային կարծրատիպերի վերանայմանը: Որոշ դեպքերում կանայք զբաղված են հանքարդյունաբերությունից ֆինանսավորվող հարակից ոլորտներում, ինչը ևս անուղղակիորեն նպաստում է կանանց տնտեսական ներառմանը Կապան քաղաքում:

«Լավ, ուրեմն, կանանց հնարավորությունների վրա ազդում է այնքանով, որ կանայք իրենց բնորոշ հեղինակությամբ և ինչ-որ տեղ իշխող հատկությամբ կարողանում են հաջողակ կառավարել իրենց զբաղեցրած պաշտոնները, բավականին լավ վարձատրվել և օրինակ հանդիսանալ քաղաքի այլ ոլորտներում աշխատող կանանց համար»:
Հանքարդյունաբերության ոլորտում աշխատող կին, 43 տարեկան

«Ես կասեի դա աշխատուժի հետ կապված ա, որովհետև ես անձնական օրինակ գիտեմ, որ հանք մտնող կին կա Կապանում, որը շատ տղամարդկանցից էլ ավել է վարձատրվում, այսինքն զուտ գենդերային ոչ մի բան չի դրված, եթե կարող ես, աշխատի, այսինքն այդ կինը նույն հանքում տղամարդու պես մեքենավար է»: Կին առաջնորդներ՝ ***ՏԻՄ-երում աշխատող կանայք կամ ակտիվիստներ, 33 տարեկան***

Չնայած հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածությունը նույնիսկ հեղինակավոր է համարվում կանանց համար համայնքի ներսում, հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ այս ոլորտում աշխատանքի ընդունվելը մեծապես կախված է հովանավորչությունից՝ ոլորտում աշխատող ծանոթների առկայությունից: Ավելին, քանի որ հանքարդյունաբերությունը մեծապես ֆիզիկական ծանրաբեռնվածություն պահանջող ոլորտ է, հետևաբար, բարձր վարձատրվող հաստիքները հիմնականում զբաղեցնում են տղամարդիկ, իսկ կանայք զբաղված են վարչական, հանքարդյունաբերությանը սպասարկող, ուստի ավելի քիչ վարձատրվող պաշտոններում, ինչը խորացնում է կանանց և տղամարդկանց միջև տնտեսական անհավասարությունները:

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ կարող ենք պնդել, որ չնայած հանքարդյունաբերությունը որոշ դեպքերում նպաստում է կանանց տնտեսական ներառմանը Կապան քաղաքում, այն մեծապես մնում է անհավասար ոլորտ կանանց համար տնտեսական հզորացման, աշխատանքի ընդունման և առաջխաղացման, ինչպես նաև վարձատրության տեսանկյուններից:

«Հա, եթե լավ ծանոթներ են ունենում, լավ էլ կարողանում են տեղավորվեն բարձր աշխատավարձով: Լավ ծանոթ ունենալով կարող ես ընդունվել աշխատանքի քո ուզած աշխատավարձով բոլոր տեղն էլ կարաս աշխատես»: ***Հանքարդյունահանող կազմակերպությունում աշխատողների ընտանիքի կին անդամներ, 55 տարեկան***

«Մեծապես տղամարդկանց ոլորտ է, երևի միայն 10 տոկոսը կին կլինի, որ աշխատում են հանքարդյունաբերության ոլորտում: Իրենք էլ հիմնական կադրային աշխատողներ են»: ***Կին առաջնորդներ՝ ՏԻՄ-երում աշխատող կանայք կամ ակտիվիստներ, 27 տարեկան***

«Ես չեմ կարող ասել, բայց բնականաբար տղամարդուն համապատասխան աշխատանքը վարձատրվում է տղամարդուն համապատասխան գումարով, կանացի աշխատանքը՝ կանացի, բայց եթե նույն աշխատատեղում լինեն և կին և տղամարդ, բնականաբար նրանք կվարձատրվեն հավասար ձևաչափով, գումարով»: ***Կանայք, ովքեր չունեն աշխատանք հանքարդյունահանող քաղաքում, 26 տարեկան***

Հանքարդյունաբերության ազդեցությունը առողջության և շրջակա միջավայրի վրա

Հարցված կանանց պատումներում հստակ ընդգծվում է հանքարդյունաբերության բացասական ազդեցությունը կանանց առողջության վրա: Առավել խոցելի են հանքարդյունաբերության ոլորտում աշխատող կանայք կամ այդ ոլորտում աշխատողների ընտանիքի անդամները: Չնայած հանքարդյունաբերությունը հիմնականում համարվում է «տղամարդկանց ոլորտ» զբաղվածության առումով, դրա շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցությունները կրում են թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք: Հաշվի առնելով կանանց ֆիզիկական առանձնահատկությունները՝ հաճախ կանայք առավել խոցելի են քիմիական նյութերի ազդեցությունների նկատմամբ: Հարցազրույցներում հատկապես շեշտվում են վերարտադրողական առողջության, քաղցկեղի, արյան ճնշման անկանոնության և այլ խնդիրներ:

«Իհարկե, կոնկրետ իմ վրա ազդել է: Ես դեռեւս 2-3 ամսվա աշխատող էի Կապանի կոմբինատում, երբ երիկամների հետ առողջական խնդիրներ ունեցա, ու էտ խնդիրները հիմնականում թունաքիմիկատների հետ էր կապված: Երբ ես այցելեցի բժշկական կենտրոն Երևանում, ինձ ասեցին, որ իրավունք չունեմ թունաքիմիկատների հետ աշխատելու, շփվելու, որովհետև կոնկրետ իմ երիկամների վրա մեծ ազդեցություն ա ունեցել»: ***Կանայք, ովքեր ունեն առողջական խնդիրներ հանքարդյունաբեր ության հետևանքով, 45 տարեկան***

«Կապան քաղաքը միենգ տռալա քաղցկեղի մեկ էլ սրտի պեն. դարի հիվանդություն, շաքարն ա իրա հերթին, դե շաքարը լա դարի հիվանդություն ա ամբողջ աշխարն ա եկալած, բայց Ղափանում հիմնականում քաղցկեղն ա շատ, ինքն ա երիտասարդների մոտ հիմնականում կրծքագեղձի քաղցկեղը, դե հունցվ որ իրոք մծ ազդեցություն օնե, բնակչության երևի ահագին տոկոսը էտ հիվանդությամբ տառապումն»: ***Հանքարդյունահանող կազմակերպությունում աշխատողների ընտանիքի կին անդամներ, 62 տարեկան***

«Շատ, մեծամասնությունը ոտքերի տրոմբներ ա, սրտի անբավարարվածություններ ա, կանացի խնդիրներ ա, որը հենց հիմնականում առնչվում ա էտ հանքարդյունաբերության հետ»: ***Հանքարդյունահանող կազմակերպությունում աշխատողների ընտանիքի կին անդամներ, 55 տարեկան***

«Իմ կարծիքով կոնկրետ հղիության հետ կապված, որովհետև շատացել են վիժումները, շատացել են երեխա չունենալու պատճառները: Հիմա ավելի շատ պետք է հետազոտվեն, ինձ թվում է քիմիական միջավայրը փչացնում է առողջությունը ավելի շատ, թե տղամարդիկ, որ մտնում են հանք իրենց վրա էլ է ազդում, երկուսի մոտ էլ առաջանում են խնդիրներ, որը չբերության է բերում»: ***Կին առաջնորդներ՝ ՏԻՄ-երում աշխատող կանայք կամ ակտիվիստներ, 33 տարեկան***

Հանքարդյունաբերության հետևանքով օդի և շրջակա միջավայրի աղտոտման խնդիրները հարցված կանանց մտահոգությունների առանցքում են: Հատկապես շեշտվում են մոտակա պոչամբարի վատ կառավարման խնդիրները, ինչի հետևանքով քամու ժամանակ թունավոր նյութերը սփռվում են քաղաքով մեկ: Այսպիսով, հարցված կանանց պատմություններում ընդգծվում է քաղաքում առկա բնապահպանական ճգնաժամի առկայությունը՝ հակադրելով տնտեսական կարճաժամկետ շահերը և երկարաժամկետ հեռանկարում դրա առողջապահական հետևանքները:

Քաղաքական մասնակցություն և որոշումների կայացում

Հետաքրքրական է պարզել, թե ինչպես ես կանայք ընդգրկված հանքարդյունաբերության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում, թե՛ տեղական ինքնակառավարման մարմիններում, թե՛ քաղաքացիական նախաձեռնություններում և բնապահպանական ակտիվիզմում: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կանայք ավելի ակտիվ ընդգրկված են բնապահպանական ակտիվիզմում, քան տեղական ինքնակառավարման մարմիններում: Հատկապես ավելի ակտիվ են երիտասարդ տարիքի կանայք:

«Հանքարդյունաբերության երկարաժամկետ կտրվածքով առնչվող հարցերին, որոնք ավելի գլոբալ ծրագրեր են ներառում իրենց մեջ, կարծում եմ՝ ոչ այնքան շատ մասնակցություն ունեն կանայք: Նրանց ներգրավվածությունը ավելի շատ եմ տեսնում բնապահպանական և համայնքային զարգացման հարցերում»: ***Հանքարդյունաբերության ոլորտում աշխատող կանայք, 43 տարեկան***

«Կանայք ավելի ակտիվ են նման գործերում՝ բնապահպանական հարցերում, այսինքն, 60% կանայք են, 40%՝ տղամարդիկ»: ***Կին առաջնորդներ՝ ՏԻՄ-երում աշխատող կանայք կամ ակտիվիստներ, 33 տարեկան***

Հաճախ քաղաքական մասնակցությունը չի ենթադրում քաղաքական ազդեցություն: Չնայած կանայք ֆորմալ առումով ընդգրկված են որոշումների կայացման գործընթացքում և համարվում են հանքարդյունաբերության ազդեցության անմիջական կրողներ, նրանց քաղաքական ազդեցությունը մնում է շատ ցածր: Հետաքրքրական է, որ եթե կինը որևէ պաշտոն է զբաղեցնում, ավելի հավանական է, որ ազդեցություն կունենա որոշումների կայացման գործընթացում: Մյուս կողմից նկատվում է, որ ավելի տարեց կանայք և տնային տնտեսուհիները բացառված են որոշումների կայացման գործընթացից: Նրանցից ոմանք երբևէ չեն մասնակցել հանրային քննարկումների, քաղաքացիական նախաձեռնությունների, շարժումների: Այսինքն, իրենց չեն համարում որոշումների կայացման դերակատարներ և երբևէ որևէ ձևով չեն փորձել մասնակցել հանքարդյունաբերության վերաբերյալ քաղաքականությանը:

«Կարել չմ ասիմ էտ հարցին, կարել չմ ասիմ, որովհետեւ ես նման պենարան զբաղվում չմ, հունցվոր ասինք տի առնչություն չոնիմ, հուցվոր շփվում չմ, տեղեկացված չմ էլի ընդհանրապես»: ***Հանքարդյունաբերության կազմակերպության աշխատողի ընտանիքի անդամ, 62 տարեկան***

Այսպիսով, ամփոփելով կանանց քաղաքական ներգրավվածության մարտահրավերները՝ բախվում ենք հակասական իրավիճակի: Մի կողմից կանայք ներգրավված են որոշումների կայացման գործընթացում, սակայն չունեն մեծ ազդեցություն ռազմավարական որոշումներ կայացնելու: Մյուս կողմից, թեև հանդիսանում են բնապահպանական խնդիրների հիմնական բարձրաձայնողներ և ցուցաբերում են ակտիվություն քաղաքացիական դաշտում, սակայն այդ գործունեությունը չի ընկալվում քաղաքական և մեծ ազդեցություն չունի հանքարդյունաբերության ոլորտի որոշումներում:

Գենդերային հարաբերություններ և սոցիալ-մշակութային միջավայր

Հակառակ նրան, որ օրենսդրական մակարդակում հանքարդյունաբերության ոլորտում ամրագրված են հավասար հնարավորություններ կանանց և տղամարդկանց համար, սակայն սոցիալ-մշակութային միջավայրը խոսում է այլ իրականության մասին: Չնայած կանանց տնտեսական ներգրավմանը հանքարդյունաբերության ոլորտում, որը ինչ-որ առումով հարցադրում է ավանդական հիերարխիկ գենդերային հարաբերությունները, համայնքային-ավանդական պատկերացումները հանդիսանում են հիմնական խոչընդոտ գենդերային արդարության, կանանց սոցիալական, մշակութային և քաղաքական հզորացման ճանապարհին:

«Հայ մենթալիտետի համաձայն տղամարդիկ միշտ բոլոր աշխատավայրերում ավելի խոսքի ուժ ունեն»: ***Կին առաջնորդներ՝ ՏԻՄ-երում աշխատող կանայք կամ ակտիվիստներ, 33 տարեկան***

Համայնքային մակարդակում մշակութային և սոցիալական պատկերացումներում դեռևս ամրապնդված են «կանացի» և «տղամարդկային» աշխատանքների մասին կարծրատիպերը, ինչը խորացնում է գենդերային անհավասարությունները: Այն կանայք, ովքեր զբաղված են հանքարդյունաբերության ոլորտում, հաճախ ընկալվում են որպես «տղամարդ-կանայք», ինչը ավելացնում է ճնշումը անձնային, ինքնության մակարդակնում: Կանանց պատումներում հաճախ հակադրվում են հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքը և «ընտանիքի կնոջ» մասին պատկերացումները:

«Մեր քաղաքում հանքարդյունաբերության ոլորտում կանանց դերը բարձր մակարդակի վրա է գտնվում, բայց կցանկանայի, որ կանայք ցանկացած պարագայում շարունակեն մնալ կանացի, գեղեցիկ և իմաստուն, որպեսզի հանքարդյունաբերությունը պատճառ չհանդիսանա կանանց և տղամարդկանց հարաբերությունների խաթարմանը»: ***Կանայք, ովքեր աշխատում են հանքարդյունաբերության ոլորտում, 43 տարեկան***

Հանքարդյունաբերության ոլորտում կանանց տնտեսական ներգրավման աճող դինամիկան վերջին տարիներին, և տղամարդկանց ու կանանց համատեղ աշխատանքային պրակտիկաները ինչ-որ չափով նպաստում են գենդերային կարծրատիպերի դանդաղ վերափոխմանը, սակայն Կապան քաղաքում, դեռևս շարունակում են գերիշխող մնալ ավանդական պատկերացումները, ինչը ոչ միայն խոչընդոտում է գենդերային արդարության հաստատմանը, այլ նաև քաղաքային մշակույթին բնորոշ սոցիալական միջավայրի ձևավորմանը, որի բաղադրիչ է նաև կանանց ու տղամարդկանց միջև հավասար սոցիալ-մշակութային միջավայրի առկայությունը:

«Բաժինների մեծ մասը՝ կանայք են, բայց վերջին խոսքը միշտ տղամարդն ա ասում»: ***Հանքարդյունահանող կազմակերպությունում աշխատողների ընտանիքի կին անդամներ, 55 տարեկան***

Գլուխ 2. Սոցիալական տարբեր խմբերի կանանց անձնական փորձառությունները հանքարդյունաբերական քաղաքում

Հանքարդյունաբերության ոլորտում աշխատող կանայք

Հանքարդյունաբերության ոլորտում աշխատող կանանց պատումներում շեշտվում են ոչ միայն բացասական փորձառությունները, այլ նաև դրական պատմությունները: Նրանք նշում են, որ այս ոլորտում աշխատանքը նպաստել է իրենց սոցիալական և տնտեսական կայունությանը, հանրային դիրքի ապահովմանը, հոգեբանական դիմակայունությանը և հզորացմանը:

«Որպես կին՝ հանքարդյունաբերությունը քեզ ուժեղացնում ա: Էդ ժամանակ ուրիշ պրոբլեմները շատ թույլ են թվում: Ես միակ կերակրողն եմ ընտանիքում: Հանքարդյունաբերությունը ինձ վստահություն է տվել վաղվա օրվա նկատմամբ»: ***57 տարեկան***

Աշխատող կանայք նաև նշում են հասարակության մեջ սոցիալական վերափոխման մասին՝ շեշտելով, որ նախկինում կնոջ համար անհնար էր համատեղել ընտանիքը և աշխատանքը, իսկ այսօր այդ պատկերացումները փոխվում են: Նրանք նաև նշում են բարձր հանրային դիրքի մասին՝ նշելով, որ համայնքում «հանքարդյունաբերության ոլորտում աշխատող կնոջը ավելի հարգանքով են վերաբերվում»:

«Անցյալում կնոջը պատկերացնում էին միայն տանը, այսօր մենք կարողանում ենք համատեղել և՛ ընտանիքը, և՛ աշխատանքը»: ***43 տարեկան***

Ինչ վերաբերվում է կանանց ինքնաընկալումներին, չնայած չեն տեսնում աշխատավարձի մեջ խտրականություններ, սակայն «բնական» են համարում, որ կանայք և տղամարդիկ ֆիզիկական առումով երբեք չեն կարող նույն աշխատանքը կատարել:

Անդրադառնալով բնապահպանական և առողջապահական հարցերին, թեև կանայք գիտակցում են խնդիրները, սակայն չեն համարում առաջնային կարևոր խնդիր, որը ազդում է իրենց կյանքի վրա: Այսպիսով, կարճաժամկետ տնեսական օգուտները, սոցիալական դիրքը ավելի են կարևորվում, քան առողջության հետ կապված հարցերը: Ինչ վերաբերվում է բնապահպանական բաժիններում աշխատող կանանց՝ իրենց գործունեությունը և բնապահպանական հարցերում ներգրավվածությունը դիտվում է զուտ որպես աշխատանքային դիրքից բխող պատասխանատվություն:

Հանքարդյունաբերության քաղաքականության և որոշումների կայացման մակարդակում կանայք ունեն սահմանափակ ազդեցություն և ավելի խորհրդատվական, այլ ոչ թե որոշում կայացնողի դերակատարում: Բնապահպանական բաժիններում ընդգրկված կանայք ավելի մեծ ազդեցություն ունեն որոշումների կայացման գործընթացում, քան այլ աշխատանքներում ընդգրկված կանայք: Ինչ վերաբերվում է ակտիվիստական մասնակցությանը, այն ամբողջովին բացակայում է:

«Կանայք որոշ պաշտոններ զբաղեցնում են, բայց երկարաժամկետ ծրագրերում հազվադեպ ենք ներգրավվում»: ***43 տարեկան***

Այսպիսով, հանքարդյունաբերության ոլորտում աշխատող կանանց համար հանքարդյունաբերությունը տնտեսական հզորացման, կարիերայի առաջընթացի, սոցիալական դիրքի հնարավորություններ է ստեղծում, սակայն գենդերային հարաբերությունների մասին պատկերացումները, կանանց հանքարդյունաբերության վերաբերյալ որոշումներին մասնակցությունը մնում են սահմանափակ:

Հանքարդյունահանող կազմակերպությունում աշխատողների ընտանիքի կին անդամներ

Հանքարդյունաբերության ազդեցության անմիջական կրողները այդ ոլորտում աշխատողներն են, սակայն հետաքրքրական է պարզել, թե ինչպես են հանքարդյունաբերությանը առնչվում այդ ոլորտում աշխատողների ընտանիքների կին անդամները: Թեև չլինելով հանքարդյունաբերության ազդեցության ուղղակի կրողներ՝ նրանք ազդվում են այս ոլորտից որպես մայրեր, ամուսիններ, քաղաքի բնակիչներ ևն: Նրանց պատմություններում հատկապես ընդգծվում են առողջության և շրջակա միջավայրի վրա ազդեցությունների ընկալումները: Կանայք նաև նշում են, որ իրենց շրջապատում շատերը երկարաժամկետ բուժումներ են ստանում քրոնիկ հիվանդություններից, որոշ մարդիկ չեն կարողանում երեխաներ ունենալ ևն, և սա նաև ստեղծում է սոցիալ-հոգեբանական ճնշվածություն կանանց շրջանում:

«Իմ տղաս արդեն առողջական խնդիր ունի՝ ողնաշարի հետ, թոքերն էլ շարքից հանում ա: Ամեն վեց ամիս ստուգվում ա, բայց նշանակություն չունի»: ***62 տարեկան***

Հանքարդյունաբերության ոլորտում աշխատողների ընտանիքի կին անդամների շրջանում հատկապես խնդրահարույց է քաղաքում տնտեսական ներգրավվածության հարցը: Նրանք նշում են աշխատանքի ընդունման խոչընդոտների մասին հանքարդյունաբերության ոլորտում, հատկապես արդիական են սոցիալական կապերի միջոցով աշխատանքի ընդունման պրակտիկաները, ինչը հաճախ բացառում է կանանց այս ոլորտում ներգրավվածությունից:

«Դրսից եկածներին ավելի հեշտ են վերցնում, քան ներսի բնակչությունից»: ***55 տարեկան***

Հաշվի առնելով, որ հանքարդյունաբերությունը քաղաքի բնակիչների եկամտի հիմնական աղբյուրն է, ստեղծվում է հակասական իրականություն. մի կողմից, կանայք գիտակցում են դրա առողջապահական, բնապահպանական ռիսկերը, մյուս կողմից, ընդգծում են դրա միակ եկամտի աղբյուր լինելը և տնտեսական կարևորությունը: Ուստի, այստեղ կարևոր է դառնում սոցիալական արդարության խնդիրը: Կանայք նշում են, որ իրենց քաղաքում հանքարդյունահանող ընկերության կողմից ոչ մի փոխհատուցում չեն ստանում: Չնայած կա սոցիալական անարդարության զգացում, որ հանքը մի կողմից վնասում է քաղաքային միջավայրը, իսկ մյուս կողմից համայնքային փոխհատուցում չկա կամ անբավարար է, հանքարդյունահանող կազմակերպությունում աշխատողների կին ընտանքի անդամների շրջանում բացակայում են քաղաքացիական մասնակցության կամ դիմադրության փորձերը, իսկ դժգոհությունները հիմնականում վերաբերվում են աշխատավարձերի չափերին և աշխատանքի պայմանների բարելավմանը:

«Եթե հանքը չաշխատի, ոչ մինիս ա փող չինիլ: Ես 42000 թոշակ եմ ստանում, իսկ տղաս աշխատում ա հանքում, ու իրա աշխատավարձը էլի քիչ ա»: ***62 տարեկան***

«Քաջարանում կոմբինատը տալիս ա կոմունալ փոխհատուցում, Կապանը ոչ մի բան չի տալիս»: ***55 տարեկան***

Կին առաջնորդներ՝ ՏԻՄ-երում աշխատող կանայք կամ ակտիվիստներ

Բնապահպանական ակտիվիզմը և տեղական համայնքային կին առաջնորդների գործունեությունը ոչ միայն պայքար է շրջակա միջավայրի պահպանության, քաղաքի համաչափ տնտեսական զարգացման, սոցիալական տարբեր խմբերի տնտեսական ներառման, այլ նաև ժողովրդավարության: Համայքնային կին ակտիվիստները հաճախ բախվում են տարբեր ճնշումների իրենց հանրային գործունեության արդյունքում, ինչը հաճախ նաև անդրադառնում է ընտանիքի անդամների վրա: Քաղաքականապես ակտիվ կանայք համարվում են «վտանգավոր»:

«Երբ լինում ես դրա դեմ և պայքարում ես, հիմնականում խոչընդոտներ է առաջացնում նույնիսկ ընտանիքի անդամների համար». ***27 տարեկան***

«Ինքս բնապահպան եմ ու լինելով դրա դեմ՝ պայքարելը խոչընդոտ է առաջացնում հետագա ծրագրերի համար»: ***22 տարեկան***

Ինչ վերաբերվում է տեղական ինքնակառավարման մարմիններում ընդգրկված կանանց, ապա նրանց ներկայացվածությունը այնքան էլ մեծ չէ, ինչը հանգեցնում է նաև քաղաքական ազդեցության նվազման: Չնայած դրան, ըստ կանանց դիտարկումների, վերջին տարիներին փորձում են ավելացնել կանանց ներկայացվածությունը տեղական ինքնակառավարման մարմիններում: Ավելին, գնալով կանայք

ավելի տեղեկացված են դառնում իրենց իրավունքների վերաբերյալ, ինչը հատկապես երևում է երիտասարդ կին առաջնորդների ի հայտ գալով այս ոլորտում:

«Նախ... իրենք այդ ոլորտում շատ քիչ են, որպեսզի իրենց որոշիչ ձայնը հստակ արտահայտեն»: ***33 տարեկան***

*«Չեմ կարծում, որ այդ քչով կարելի է ինչ-որ բան փոխել»:****27 տարեկան***

Կանայք, ովքեր չունեն աշխատանք հանքարդյունահանող քաղաքում

Կապան քաղաքում բնակվող գործազուրկ կանանց համար հանքարդյունաբերությունը ստեղծում է ոչ միայն տնտեսական անհավասարություններ, այլ նաև սոցիալական և մշակութային: Չնայած շեշտվում է, որ չկան անհավասարություններ և խտրականություն կանանց և տղամարդկանց միջև, խորին հարցազրույցների վերլուծությունը ցույց է տալիս, որ կանանց մուտքը հանքարդյունաբերություն մեծապես խոչընդոտված է: Ավելին, գենդերային կարծրատիպերը նորմալիզացված են հենց կանանց կողմից, ինչպիսիք են «կանացի և տղամարդու աշխատանք», «կանացի և տղամարդու վարձատրություն» ևն, ինչը ստեղծում և խորացնում է գենդերային հենքով տնտեսական անհավասարությունները:

«Բնականաբար տղամարդուն համապատասխան աշխատանքը վարձատրվում է տղամարդուն համապատասխան գումարով: Կանացի աշխատանքը՝ կանացի»: ***26 տարեկան***

Բացի կանանց ինքնակարծրատիպերը, կանանց տնտեսական բացառմանը նպաստում են նաև համայնքային պատկերացումները հանքարդյունաբերության ոլորտում աշխատող կանանց վերաբերյալ, ինչը մշակութային խոչընդոտ է ստեղծում կանանց համար աշխատանքի ընդունման և աշխատանքում առաջընթաց ունենալու: Սա ցույց է տալիս, որ հաճախ համայնքում գենդերային սպասումները կարող են խորացնել կանանց տնտեսական կախվածությունը ընտանիքի այլ անդամներից:

«Կարող ա տղամարդիկ մի քիչ այլ կերպ նայեն այն կանանց, որոնք տղամարդկանց հետ կաշխատեն մի տեղում, բայց դա սխալ է»: ***32տարեկան***

Տնտեսապես ինտեգրված չլինելը աշխատանք չունեցող կանանց շրջանում ստեղծում է ռիսկեր ոչ միայն ընտանիքի տղամարդ անդամներից տնտեսական կախվածության, այլ նաև սոցիալական օտարման համայնքային կյանքից, իրավունքների ցածր գիտակցության, հանրային մասնակցության, քաղաքական ազդեցության բացակայության: Չնայած աշխատանք չունեցող կանայք բարձրաձայնում են մտահոգություններ շրջակա միջավայրի աղտոտման, առողջության վերաբերյալ, խորին հարցազրույցներից պարզ է դառնում, որ այս խմբի կանայք իրավունքները և դրանց մասին բարձրաձայնելը դիտում են որպես միայն այդ ոլորտում աշխատող մարդկանց իրավունք: Աշխատանքային միջավայրից կտրված լինելը նպաստում է նաև ցածր սոցիալական կապիտալ ունենալուն, ինչը նվազեցնում է ոչ միայն քաղաքացիական մասնակցության, այլ նաև տարբեր ռեսուրսների հասանելիության հնարավորությունները, որն էլ այս խմբի կանանց դարձնում է ամենախոցելիներից մեկը:

«Եթե տվյալ կառույցում են աշխատում, իրենք հավասար իրավունքներ և ազդեցություն կունենան, բայց եթե սովորական մարդիկ են, միայն իրենց կարծիքը կարող են արտահայտել...»: ***26 տարեկան***

Հանքարդյունաբերության հետևանքով առողջական խնդիրներ ունեցող կանայք

Կանանց մարմինները հանքարդյունաբերության ազդեցության անմիջական կրողներն են, թե՛ որպես քաղաքի բնակիչներ, ովքեր երկարաժամկետ հեռանկարում անընդհատ ենթարկվում են շրջակա միջավայրի աղտոտման ազդեցությանը, թե՛ որպես հանքարդյունաբերության ոլորտի աշխատակիցներ, որոնց համար հաճախ ապահովված չեն աշխատանքային անվտանգ պայմաններ:

«...և՛ ճնշման տատանումներ, և՛ ընդհանրապես, եթե գնում ես բժշկի՝ ինքը ցույց ա տալիս էլի... այսինքն հասկանում ես, որ եթե խնդիր էլ կա՝ օդն ա խնդիրը»: ***40 տարեկան***

Իրենց առողջական փորձառության մասին խոսելիս կանայք գիտակցում են, որ շրջակա միջավայրի աղտոտման և առողջության հետևանքները կրում են բոլորը, սակայն դրանից ստացված օգուտները ոչ հավասարաչափ են բաշխվում: Առողջական խնդիրներ ունեցող կանանց հետ զրույցներում նաև ընդգծվում են, որ, բացի թունաքիմիկատների անմիջական ազդեցությունը, աշխատանքային պայմանները հանքարդյունաբերության ոլորտում աշխատող կանանց համար ևս գենդերազգայուն չեն, ինչն իր ազդեցությունն է թողնում կանանց առողջության և կյանքի որակի վրա: Սա նշանակում է, որ կանայք ոչ միայն ֆիզիկապես կարող են նույն ծանրաբեռնվածությունը կրել, ինչ տղամարդիկ, այլ նաև կարող են ենթարկվել հոգեբանական ճնշման, պիտակավորման, ինչպես օրինակ՝ «տղամարդ-կին» համարվելն է:

«Կանայք էլ են անում էնպիսի գործեր, ինչը անում է տղամարդը: Տղամարդու վայել գործեր են անում: Ցանկալի կլինի, որ կանանց աշխատանքները մի քիչ ավելի հեշտ լինեն»: ***40 տարեկան***

Այսպիսով, կանանց առողջության վերաբերյալ պատմությունները բացահայտում են ոչ միայն հարցված կանանց անձնական մտահոգությունները իրենց առողջության վերաբերյալ, այլ նաև դուրս են բերում գենդերային, սոցիալական, տնտեսական, բնապահպանական, քաղաքական անարդարության օրինակներ, որտեղ կանանց մարմինը դառնում է դրանց անմիջական կրողը:

Եզրակացություն

Կապանը Հայաստանի հետխորհրդային քաղաքներից մեկն է, որի ուսումնասիրությունը բացահայտում է, թե ինչպես է հանաքարդյունահանման տրամաբանության շուրջ ձևավորվում քաղաքային կյանքը: Քաղաքային մշակույթի առկայության կարևոր ցուցիչ է նաև գենդերային հարաբերությունները: Կայուն, զարգացած քաղաքային մշակույթ ունեցող բնակավայրերում կանայք ունեն առողջության և կյանքի որակի հավասար հնարավորություններ, ներառված են քաղաքային կյանքում տնտեսապես, ունեն հավասար հնարավորություններ քաղաքական մասնակցության, մշակութային պատկերացումները չեն խոչընդոտում հանրային կյանքում ներառման:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ բնական ռեսուրսների արդյունահանման շուրջ ձևավորված քաղաքները ստեղծում են ռիսկեր կանանց ներառման և քաղաքի կայուն զարգացման: Հակառակ տարածված պատկերացումների, տնտեսական զարգացումը միշտ չէ, որ նպաստում է կանանց հզորացմանը: Ի հավելումն նրա, որ արդյունահանող քաղաքում կանայք ունեն տնտեսական ներառման սահմանափակ հնարավորություններ, հաճախ ցածր վարձատրվող և հանքարդյունաբերությանը սպասարկող ոլորտներում, սոցիալական կապիտալի միջոցով աշխատանքի առաջխաղացման սահմանափակումները, ինչպես նաև քաղաքային կարծրատիպերը կանացիության վերաբերյալ ավելի են խորացնում առկա գենդերային անարդարության կառուցվածքները:

Կանանց առողջության պայմանները պայմանավորվում են այն սոցիալական, տնտեսական, բնական միջավայրով, որտեղ նրանք ապրում են, և կանանց առողջությունը ևս սոցիալական արդարության մեկ ուրիշ ցուցիչ է: Նրանց առողջական պատմությունները ցույց են տալիս, թե ինչպես են կանանց մարմինները դառնում հանքարդյունաբերության ազդեցության կրողներ՝ խորացնելով առողջության անհավասարությունները: Սա հատկապես վերաբերվում է վերարտադրողական առողջությանը և շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով առաջացած քրոնիկական հիվանդություններին:

Չնայած արմատացած բնապահպանական, տնտեսական, առողջապահական, սոցիալական անարդարությթուններին, կանայք փորձում են լսելի դարձնել իրենց ձայները: Մինչ նրանք ակտիվ են տեղական ակտիվիզում, կանանց մասնակցությունը ֆորմալ քաղաքականությանը մնում է սահմանափակ, հաճախ սիմվոլիկ և խորհրդատվական, այլ ոչ՝ որոշում կայացնողի դերում: Այսպիսով, չնայած որոշ դեպքերում կանանց ինքնակարծրատիպերին, որոնք սահմանափակում են կանանց մասնակցությունը հանրային կյանքին, նրանց քննադատական դիրքը և խնդիրների գիտակցումը ցույց է տալիս կանանց ներուժը ինքնակազմակերպվելու և հանդես գալու տեղական փոփոխությունների նախաձեռնողներ:

Հետազոտության սահմանափակումները. Հետազոտության փոքր ընտրանքը, թեև բնորոշ է որակական հետազոտություններին, հնարավորություն չի տալիս ընդհանրացնել հետազոտության արդյունքները այլ հանքարդյունաբերական քաղաքների համար: Սակայն հետազոտության օբյեկտի ընդգրկվածությունը որպես համահետազոտողներ մեծացնում է արդյունքների վալիդությունը: Այսպիսով, հետազոտության արդյունքները բացահայտում են մի շարք ռիսկեր, որոնք հետագայում կարող են հիմք հանդիսանալ հանքարդյունաբերական քաղաքներում ավելի խորքային ուսումնասիրությունների համար:

Առաջարկներ

Առաջարկներ կանանց հզորացման համար հանքարդյունահանող քաղաքներում

- ✓ *Խրախուսել կանանց ներգրավվածությունը տնտեսության այլ ճյուղերում:*

Զարգացնել հանքարդյունաբերությանը չառընչվող տնտեսության այլ ճյուղերը, ներառել կանանց տնտեսության այլ ոլորտներում՝ միաժամանակ իրականացնելով մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, օրինակ, տուրիզմի, ձեռնարկատիրության և այլ ոլորտներում:

- ✓ *Իրականացնել կանանց քաղաքական հզորացման ծրագրեր*:

Խրախուսել կանանց ներգրավվածությունը քաղաքային որոշումների կայացման գործում, ինչպես օրինակ, ստեղծելով կանանց խորհրդատվական մարմիններ: Ներգրավել կանանց քաղաքի բյուջեի բաշխման, հանքարդյունաբերության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում: Հզորացնել կանանց տեղական քաղաքացիական հասարակության խմբերին և կազմակերպություններին՝ տրամադրելով գիտելիքներ հանքարդյունաբերության ազդեցության և հմտություններ ջատագովության, ակտիվիզմի և որոշումների կայացման գործընթացում ներգրավման վերաբերյալ:

- ✓ *Ստեղծել կանանց խմբային աջակցության ցանցեր:*

Խրախուսել կանանց ցանցային կազմակերպությունների ձևավորմանը, ինչպես օրինակ կանանց խնդիրներով զբաղվող ՀԿ-ները, ասոցիացիաները, քաղաքացիական նախաձեռնությունները, ինչը ոչ միայն կընդլայնի քաղաքացիական հասարակության տարածքը հանքարդյունահանող քաղաքներում, այլ նաև հնարավորություն կտա կանանց խմբային աջակցության:

- ✓ *Իրականացնել գենդերազգայուն առողջապահական ծրագրեր:*

Ուսումնասիրել առավել տարածված հիվանդությունները հանքարդյունահանող քաղաքներում և իրականացնել գենդերազգայուն առողջապահական ծրագրեր՝ նվազեցնելու առողջապահական անհավասարությունները հանքարդյունահանող համայնքներում:

- ✓ *Նպաստել կանանց վերաբերյալ սոցիալ-մշակութային կարծրատիպերի վերափոխմանը*:

Գենդերային հավասարության հաստատման ճանապարհին հաշվի առնել ոչ միայն օրենսդրական, այլ նաև համայնքների սոցիալ-մշակութային ընկալումները: Հանքարդյունահանող համայնքներում իրականացնել կրթական, մշակութային ծրագրեր, որոնք կնպաստեն կանանց վերաբերյալ համայնքային կարծրատիպերի փոփոխմանը ֆիլմերի, բանավոր պատմությունների, մեդիա հաղորդումների միջոցով:

Առաջարկներ հանքարդյունահանման շուրջ ձևավորված քաղաքների համար

✓ Բազմակողմանի դարձնել քաղաքային տնտեսությունը:

Քաղաքի տնտեսության կախված լինելը բացառապես հանքարդյունահանությունից կանխելու համար, անհրաժեշտ է ներդրումներ կատարել տնտեսության այլ ոլորտներում, ինչպիսիք են տուրիզմը, տեղեկատվական տեխնոլոգիաները, կրթությունը, մշակույթը և այլ ոլորտներ, ինչը քաղաքի բնակիչներին ոչ միայն կախվածության մեջ չի դնի հանքարդյունաբերությունից, այլ նաև կերաշխավորի կայուն քաղաքային զարգացումը:

✓ Բնապահպանական արդարությունը և հանրային առողջությունը առաջնահերթություն սահմանել:

Իրականացնել մշտադիտարկում հողի, ջրի, օդի որակի: Ստացված տվյալները հրապարակել հանրության համար: Մշտապես հաշվետու պահել հանքարդյունահանող ընկերություններին: Հանքարդյունաբերության հետևանքով առացած հիվանդությունների կանխարգելման և բուժման համար իրականացնել առողջապահական ծրագրեր:

✓ Վերահմաստավորել քաղաքային պլանավորումը:

Հետխորհրդային արդյունահանող քաղաքներից շատերը կարիք ունեն քաղաքային ինֆրաստրուկտուրայի վերանայման: Հատկապես անհրաժեշտ է շեշտը դնել ոչ թե քաղաքի ինդուստրիալ հատվածների վրա, այլ ուշադրություն դարձնել հանրային տարածքների վերահմաստավորմանը: Քաղաքային պլանավորումը պետք հաշվի առնի կանանց, երեխաների և այլ խոցելի խմբերի կարիքները:

✓ Պատրաստել քաղաքը կանաչ անցման:

Մշակել քաղաքի կանաչ անցման ռազմավարություններ: Այս գործընթացում ներառել տարբեր կողմերի՝ հետազոտողների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, քաղաքի բնակիչներին և այլ հետաքրքրված կողմերին: Ներդրումներ կատարել քաղաքի «հանքարդյունահանող» կերպարի վերափոխման մեջ՝ կիրառելով հանրային հաղորդակցության տարբեր տեխնոլոգիաներ: Վերապատրաստել բնակչությանը ներառվելու տնտեսության այլընտրանքային ճյուղերում:

✓ Վերահմաստավորել քաղաքային կառավարումը:

Ներդնել մասնակցային կառավարման պրակտիկաներ, որտեղ կանայք և այլ խոցելի խմբերը կարող են մասնակցել որոշումների կայացման, քաղաքի բյուջեի պլանավորման, հանքարդյունաբերության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներին:

Օգտագործված աղբյուրներ

Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն. (2023). *Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023թ. հունվար-հոկտեմբեր (Հաշվետվություն No. 142)*. Արմստատ. https://armstat.am/file/article/sv_10_23a_142.pdf.

Braun, V., & Clarke, V. (2006). *Using thematic analysis in psychology*. Qualitative Research in Psychology, 3(2), 77–101. https://doi.org/10.1191/1478088706qp063oa.

Browne, C. (2017). *Critical social theory*. SAGE Publications Ltd, https://doi.org/10.4135/9781473911819.

Fozdar, F., & Israel, M. (2020). *Sociological research ethics: Contributions and controversies*. In A. S. Iltis & D. MacKay (Eds.), The Oxford handbook of research ethics (pp. 525–541). Oxford University Press.

Greenwood, D. J., & Levin, M. (1998). *Introduction to action research: Social research for social change*. Thousand Oaks, CA: Sage Publications.

Grigoryan, R., Petrosyan, V., Melkomyan, D., & Khachadourian, V. (2023). *Assessment of ecological and toxicological state of soils and waters in the neighborhood of mining industry enterprises in the Armenian Highlands*. Environmental Science and Pollution Research, 30(1), 1234–1245.DOI:10.3390/life13020394.

Hall, B. (1992). *From margins to center? The development and purpose of participatory research*. The American Sociologist, 23(4), 15–28. https://doi.org/10.1007/BF02691928.

Maguire, P. (1987). *Doing participatory research: A feminist approach*. Amherst, MA: Center for International Education, University of Massachusetts.

Mertens, D. M. (2021). *Transformative research methods to increase social impact for vulnerable groups and cultural minorities*. Social Sciences, 10(8), 287. https://doi.org/10.3390/socsci10080287.

Pipoyan, D., Stepanyan, S., Beglaryan, M., Stepanyan, S., Mendelsohn, R., & Deziel, N. C. (2023). *Health risks of heavy metals in food and their economic burden in Armenia*. Environment international, 172, 107794. https://doi.org/10.1016/j.envint.2023.107794.

Reason, P., & Torbert, W. R. (2001). *The action turn: Toward a transformational social science*. Concepts and Transformation, 6(1), 1–37. https://doi.org/10.1075/cat.6.1.02rea.

Reid, C. (2004). *Advancing women's social justice agendas: A feminist action research framework*. International Journal of Qualitative Methods, 3(3), 1–15. https://doi.org/10.1177/160940690400300301.

URBAN IMAGINATION
Sociological Research Laboratory

WOMEN'S FUND ARMENIA